ԺԷ

ՄԱՐԻԱՄԱՆՑ ԿԱՄ ԻՒՂԱԲԵՐԻՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

1.— Աւետարանի մէջ կը յիշատակուին Իւղաբեր կանայք որ Գալիլիայէն գալով կ'ընկերանային Յիսուսի և կ'սպասաւորէին Անոր. անոնց գլխաւորն էր Մարիամ Մագդաղենացին. միւս Մարիամը՝ որ կ'ըսուի նաև Մարիամ Յակոբայ, Սողոմէի՝ մայր որդւոցն Զեբեդեայ, ըստ Ղուկասու նաև, Յովհաննա Հերովդէսի հազարապետ Քուզայի կինը՝ և ուրիշ կիներ, որոնց մէջ, դարձեալ Ղուկասու համաձայն, կը գտնուէր Շուշան. ահա ասոնք այն կիներն էին որ Տէրը կը հոգային և կը ծառայէին Անոր։ Յիսուսի խաչելութեան ժամանակ հեռուէն կը դիտէին չատ կիներ, որոնց մէջ կային այս յիշուածներէն ոմանք։ Յովսէփ Արիմաթացին «սուրբ կտաւներով» պատեց Յիսուսի մարմինը և թաղեց նոր գերեզմանի մը մէջ և այն գերեզմանին դուռը կափարիչ քարով մը փակելէ յետոյ մեկնեցաւ. նոյն միջոցին հոն կը գտնուէին Մարիամ Մագդաղենացին և միւս Մարիամն և կը նստէին հանդէպ գերեզմանին (Մատթ. ԻԷ. 55–61)։ Իսկ Մարկոս (ԺԶ. 1–9) և Ղուկաս (ԻԳ. 55–56) կը գրեն թէ նոյն կանայք խնկեցին և օծեցին Յիսուսի մարմինը. միաշաբաթի օրը արևագալին գերեզման գնացին, և տեսան որ գերեզմանի մեծ քարը մէկդի տնուած էր. և երբ գերեզման մտան հրեշտակը աւետեց անոնց թէ Յիսուս յարութիւն առած է և թափուր գերեզմանը ցոյց տալով պատուիրեց անոնց որ լուր տան աշակերտներուն։ Իւղաբեր կանայք երբ լսեցին այս լուրը վախցան ու փախան գերեզմանէն և մէկու մ'ալ խօսք մը չըրին։ Յարուցեալ Յիսուսը առաւօտուն՝ առաջին միաշաբաթին՝ երևցաւ Մարիամ Մագդաղենացիին և ան գնաց պատմեց անոնց՝ որ իրեն հետ էին, կուլային ու կը սգային (Տե՛ս նաև Յովհ. Ի. 1–2, 11–18)։ Իւղաբեր կանանցմէ ոմանք կը յիշատակուին նաև Յիսուսի խաչին մօտ, երբ անոնք Տիրամօր հետ արտասուաթոր աչքերով կը դի–